ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Գ Ո Ր Ծ Ի Վ Ա Ր Ո Ւ Յ Թ Ը Կ Ա Ր Ճ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

«22» սեպտեմբերի 2023 թվական ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր՝ Ս. Խաչատրյան), քննելով ըստ հայցի «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանի 06.07.2023 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 1963-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԴ2/23759/02/23 քաղաքացիական գործով հայցվորի՝ հայցից հրաժարվելու վերաբերյալ դիմումը և դատական ծախսերի բաշխման հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

10.08.2023 թվականին «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանի 06.07.2023 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 1963-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) դատավոր Ս. Խաչատրյանին մակագրվել է 10.08.2023 թվականին, իսկ դատավորի աշխատակազմին է հանձնվել 11.08.2023 թվականին:

15.08.2023 թվականին Դատարանը կայացրել է «Հայցադիմումը վարույթ ընդունելու գործը գրավոր ընթացակարգով քննելու և ապացույցներ պահանջելու մասին» որոշում, որով եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 11.09.2023 թվականը:

11.09.2023 թվականին հայցվորի ներկայացուցիչը Դատարան է ներկայացրել թիվ ԵԴ2/23759/02/23 քաղաքացիական գործով հայցից հրաժարվելու վերաբերյալ դիմում (միջնորդություն) (մուտք՝ Մ-37250/23):

11.09.2023 թվականին դատարանը կայացրել է որոշում՝ 18.09.2023 թվականին դատական նիստ նշանակելու մասին:

18.09.2023 թվականին կայացած դատական նիստին մասնակցել է հայցվորի ներկայացուցիչը, ով պնդել է ներկայացված դիմումը (միջնորդությունը):

Միջնորդության քննությունն ավարտվել է 18.09.2023 թվականին, և հայտարարվել, որ դատական ակտը կհրապարակվի 22.09.2023 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

<u>Միջնորդությունը քննելու համար նշանակություն ունեցող փաստերը.</u>

1. 11.09.2023 թվականին Դատարան ներկայացված դիմումով հայցվոր «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը ամբողջությամբ հրաժարվել է թիվ ԵԴ2/23759/02/23 քաղաքացիական գործով ներկայացված հայցից և խնդրել է գործի վարույթը կարճել (մուտք՝ Մ-37250/23):

2. «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության տնօրենը 23.06.2023 թվականին տրված լիազորագրով լիազորել է Վահե Համլետի Սեդրակյանին, ի թիվս այլ գործողությունների, ամբողջովին կամ մասնակիորեն հրաժարվել հայցային պահանջներից:

<u>Դատարանի կիրառելի իրավունքը, վերլուծությունը, պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

Դատարանը, հրավիրված դատական նիստում, քննելով հայցվորի՝ պահանջից հրաժարվելու մասին միջնորդությունը և դատական ծախսերի բաշխման հարցերը, գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը պետք է կարճել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

Այսպես՝ հայցի պաշտպանության դատավարական միջոցների տնօրինման ձևերը սահմանվում են դատական վեճի տնօրինման սկզբունքի հիման վրա, որի ուժով կողմերը որոշում են վեճի հետագա ընթացքն ու լուծման ճանապարհները՝ հայցի իրավունքի պաշտպանության միջոցների տնօրինման միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով հայցվորը (դիմողը) իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու իր պահանջից, փոփոխելու հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը, (…):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել իր պահանջներից մինչև առաջին ատյանի դատարանի կողմից դատաքննությունն ավարտելը, իսկ 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախքան գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը գործին մասնակցող անձանց բացատրում է պահանջից հրաժարվելու դատավարական հետևանքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը կամ դիմողը հրաժարվել է պահանջից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում (...):

Նույն հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան (...):

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորը դատական նիստից դուրս ներկայացնում է պահանջներից հրաժարվելու մասին գրավոր միջնորդություն, ապա առաջին ատյանի դատարանը միջնորդությունն ստանալու պահից տասնօրյա ժամկետում հրավիրում է դատական նիստ՝ պահանջներից հրաժարվելու մասին միջնորդությունը և դատական ծախսերի բաշխման հարցերը քննելու նպատակով: Եթե հայցվորը նիստի ժամանակ պնդում է պահանջներից հրաժարվելու իր միջնորդությունը կամ պատշաճ տեղեկացված լինելու պայմաններում չի ներկայանում դատական նիստին, ապա առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում գործի վարույթը կարճելու մասին:

Վերը նշված դատավարական նորմերի վերլուծությունից եզրահանգում ենք, որ հայցային պահանջներից հրաժարումը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից անվերապահորեն, առանց որևէ պայմանի հրաժարումն է: Հայցային պահանջներից հրաժարումը հայցվորի միակողմանի տնօրինչական գործողություն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր նկատառումներով, որով վերջինս անվերապահ հրաժարվում է իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունից և ուղղված է իր նախաձեռնությամբ հարուցված գործի վարույթի դադարեցմանը:

Ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանում գործը վարելու լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարելու ցանկացած դատավարական գործողություն, բացառությամբ՝ հայցապահանջներից ամբողջովին կամ մասնակիորեն հրաժարվելու, իսկ 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում թվարկված գործողություններից յուրաքանչյուրի կատարման համար ներկայացվողի տված լիազորագրում պետք է ուղղակիորեն նախատեսված լինի ներկայացուցչի այդ լիազորությունը:

Տվյալ դեպքում հայցվորի ներկայացուցիչը, օգտվելով լիազորագրով իրեն վերապահված ամբողջությամբ հայցային պահանջներից հրաժարվելու լիազորությունից, Դատարան ներկայացված դիմումով հրաժարվել է թիվ ԵԴ2/23759/02/23 քաղաքացիական գործով ներկայացված հայցից:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշված իրավակարգավորումը, Դատարանը գտնում է, որ ըստ հայցի «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանի 06.07.2023 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 1963-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԴ2/23759/02/23 քաղաքացիական գործի վարույթը պետք է կարճել՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով հայցվորի կողմից պահանջից հրաժարվելու հիմքով:

Դատարանի եզրահանգումները դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատավարության մասնակիցները և այլ անձինք նույն օրենսգրքով նախատեսված գրավոր փաստաթղթերը (հայցադիմում, (...) և այլն) կարող են դատարան ներկայացնել առձեռն, էլեկտրոնային եղանակով կամ փոստով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով, իսկ 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջներով հայց ներկայացնելու համար պետական տուրքի չափը որոշվում է հայցագնի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցագինը որոշվում է. դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով՝ պահանջվող գումարի չափով, իսկ 2-րդ մասի համաձայն՝ հայցագնի մեջ մտնում են նաև պահանջվող տուժանքի (տուգանքի, տույժի) և տոկոսների գումարները՝ հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ 2-րդ մասի համաձայն՝ գործի քննության ընթացքում պատասխանողի կողմից հայցապահանջները կամավոր կատարելու հետևանքով գործի վարույթը կարճվելու դեպքում դատարանը դատական ծախսերի հատուցման պարտականությունը դնում է պատասխանողի վրա: Ընդ որում, դատարանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածով կամ 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարի չափը փաստացի հաշվարկում է պատասխանողի կողմից հայցապահանջը ամբողջությամբ կատարելու օրվա դրությամբ, և այդ պահից սկսած՝ մինչև դատարանի վճիռ կայացնելը, պատասխանողի նկատմամբ որևէ տույժ կամ տուգանք չի կարող հաշվարկվել:

Դատարանը փաստում է, որ հայցը ներկայացնելու օրվա դրությամբ հայցվորի կողմից նախապես վճարվել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով պետական տուրք, այսինքն՝ դատարան հայց ներկայացնելու օրվա դրությամբ օրենքով սահմանված չափով պետական տուրքը հայցվորի կողմից վճարված լինելու և հայցվորի կողմից հայցից հրաժարվելու պայմաններում դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով, որ գործի քննության հետ կապված պետական տուրքից զատ այլ ծախսեր առկա չեն, գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ինչ վերաբերում է հայցի ապահովման միջոցների վերացման հարցին, ապա սույն քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոցներ կիրառված չլինելու պայմաններում բացակայում է հայցի ապահովման միջոցների վերացման լուծման հարցը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 110-րդ, 149-րդ, 182-րդ, 183-րդ, 200-րդ, 361-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Ըստ հայցի «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանի 06.07.2023 թվականի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 1963-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԴ2/23759/02/23 քաղաքացիական գործի վարույթը կարճել՝ հայցվորի կողմից պահանջից հրաժարվելու հիմքով:

2. Դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը համարել լուծված:

3. Գործի վարույթը կարճելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվել:

4. Գործի վարույթը կարճելու մասին որոշման դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**